

ման մը վրայ . և կ'երևնայ թէ հին ա-
տեն այս հողապատուարին երեսը քար
հագուցած էր , և քարերը ցրուած ըլ-
լալով հիմա միայն մէջի զանգուած հո-
ղամարմինը մնացած է : Պարիսպները
չիտակ չեն , այլ տեղ տեղ կիսաբոլոր
մարտկոցներ ' ունէին յիսնական ոտք
իրարմէ հեռու : Ս'էկ պարիսպը մէ-
կալէն յիսուն ոտք հեռու է , և անոր
զուգահեռական , մարտկոցներն ալ առ-
ջիններուն համապատասխան . միայն՝
արտաքին պարսպին բարձրութիւնը ներ-
սինէն տասնհինգ ոտքի չափ ցած էր :
Արտաքին պարսպէն դուրս խիստ լայն
խրամ մը կար , որուն խորութիւնը չենք
կրնար գուշակել , որովհետեւ հիմա լե-
ցուած ու մշակուած գետին է , մէկ
մասն ալ բրնձնոց : Խրամին ջուրը Ս'ե-
ծամօրէն կու գար , թերեւս նաեւ Լա-
րասխէն , և պարսպին բոլորը դրսէն
շուրջ կը պատէր : Այս միջնաբերդին
մէջտեղը պզտի բլրակի մը ծայրը կը
տեսնուի հիմա Թագաւորի ապարանքին
աղիւսակերտ հիմը . իսկ բլուրը բոլոր-
ովին քշտած քրքրած ու քայքայած
հող է : Երտէսին յիշատակած Թա-
գաւորական պալատը որ երեսուն ու
վեց սեաւ ու ահեղ սիւներու վրայ կե-
ցած է եղեր , ըլլայ թերեւս այս բլրոյն
վրայ : 'Նմանապէս Թագաւորի կ'ըսէ
թէ այս աւերակներուն մէջ տեղը կը
տեսնուի եղեր իր ատենը մեծ ապա-
րանքի մը մնացուածք . բայց հիմա չի-
նուածոց փշուրքէն ուրիշ բան չտես-
նուիր :

Իսկ քաղքին շրջանակը միջնաբեր-
դին պէս երկու կարգ պարսպով պա-
տած էր , բոլորաշէն մարտկոցներով , որ
կէս մը աղիւսով շինուած էր՝ կէս մըն
ալ խրամէն հանած կաւով : Այս պար-
սպին շրջապատը 7,000 քայլ է : Հիմա
այս մեծ քաղաքատեղոյն վրայ ուրիշ
հին շինուածոց մնացորդ չտեսնուիր ,
բայց Եթէ քանի մը պատերու հիմունք
և պզտի եկեղեցւոյ մը աւերակ :

Քաղքին կեդրոնին մօտ պատնէշնե-

րու հարաւային կողմը գտայ , կ'ըսէ
Տիւպուա , տասը տասուերկու հատ գե-
րեզմանական կարկառներ , ձեացած
միայն հողէ անօթներու բեկորներով
ու այրած ոսկերաց մոխրով , որոնց ա-
մէն մէկը տասնուհինգ քսան ոտք բար-
ձրութիւն ունին :

Քաղքին լաւագոյն Թաղը կ'երևնայ
թէ այս կարկառներու և միջնաբերդին
մէջտեղով կ'իյնար : Իսկ քաղքին հա-
րաւային կողմը պարտէզներ էին որ Լա-
րասխին վրայ կը նայէին : Հիմա այս
քաղաքսրմին մէջ եղած միջոցը կը վա-
րեն ու կը սերմանեն : Պզտի գիւղ մը
իրեն պարտէզներով քաղքին հիւսի-
սային ծայրի պատուարին ու միջնա-
բերդին մէջ անկիւնը կեցած է :

Ահա այս է Արտաշատ մեծ արքայա-
նիստ ու հռչակաւոր քաղաքին հիմա-
կուան մնացորդը : Թշնամիք ու ժամա-
նակը միաբանած հոյակապ քաղաքը
գետնի հաւասարեցին :

Տեղացոյց քուերը :

- 1 Արքունի պալատին հիմը :
- 2 Միջնաբերդին մարտկոցաւոր պարիսպը :
- 3 Միջնաբերդին գուռը :
- 3' Քաղքին արեւելեան գուռը :
- 4 Մեծամօրի գետը :
- 5 Գիւղ :
- 6 Եկեղեցի :
- 7 Քաղքին բաղամարդ Թաղը :
- 8 Գերեզմանական կարկառները :
- 9 Պարտէզք :
- 10 Հողապատնէշք , որ դեռ չափուած չեն :
- 11 Երասխայ հին ճամբան որ հիմա չոր է :
- 12 Հին խրամ , և հիւսիսային գուռն :
- 13 Բրնձնոց :

ԵՍ

Ջանա որ սղան իր զգացմունքներն իմացընէ ,
բայց իր մտաց գաղափարները չէ :

Տղուն զքեզ բարեկետ կերպէն կրնաս իմանալ
թէ որչափ կը սիրէ զքեզ :

Աւելի տղոց խօսքերուն ուշ կը դնենք մենք , քան
թէ անոնց լուութեանը : Սակայն սղաք կը լռեն
ամենէն աւելի հարկաւոր բաները , թէ չարին մէջ
ըլլայ և թէ բարւոյն , կամ երկչոտութեան պատ-
ճառաւ , և կամ վայելուչ կերպով բացատրել
չկրնալուն համար : Վայ ան դատաւարակին ու
հոգաբարձուին , որ լուութեան վախճանը չգիտէր
գուշակել :

ԴՈՄԱԶԻՈՅ